ԵՐԵՎԱՆԻ
ԿԱՐԵՆ ԱՍՐՅԱՆԻ
ԱՆՎԱՆ Հ. 171 ՀԻՄՆԱԿԱՆ
ԴՊՐՈՑ

«ԳԻՏԱԿՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ»

«ԳԻՏԱԿՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ»

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

/6-ից 9-րդ դասարաններ, շաբաթական 2 ժամ/

Արդի կրթական բարեփոխումների նպատակն է ուսումնական գործընթացը դարձնել մրցունակ, ժամանակակից չափանիշներին համապատասխան: Ներկայումս ամբողջ աշխարհում ընթանում են վերափոխումներ, և հանրությունը կրթությանը նոր քաղաքացու ձևավորման պահանջ է առաջադրում:

Կրթության դերն աճում է, միաժամանակ բարեկեցության հասնելու ուղիների փնտրտուքը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով գեղեցիկը տեսնելու, գնահատելու, արժևորելու և ստեղծելու արժեքային որակներ: Այսպիսի որակների ձևավորմանն ու զարգացմանը մեծապես նպաստում են արվեստի բնագավառի խմբակները, առավել ևս թատրոնը, որը բոլոր արվեստների սինթեզն է համարվում:

Բազմաթիվ առաջատար հաստատություններում ուսումնական գործընթացին զուգահեռ հաջողությամբ կիրառվում է արվեստի միջոցով կրթելու և դաստիարակելու մեթոդը: «Գիտակների ակումբը» արդյունավետ միջոց է, որը նպաստում է երեխայի բանավոր խոսքի զարգացմանը, բազմագիտակությանը, ինտելեկտուալ զարգացմանը, վերլուծական մտածողությանը և այլ հմտությունների ձևավորմանը:

Ի՞ՆՉ Է ԳԻՏԱԿՆԵՐԻ ԱԿՈՒՄԲԸ

1.Գիտակների ակումբը նախ ժամանցային կրթական հարթակ է, որտեղ սովորողները ինտելեկտուալ խաղերին և մրցույթներին պատրաստվելիս և մարզվելիս ստանում են բազմաթիվ գիտելիքներ և արժեքավոր տեղեկություններ:

2.Գիտակների ակումբի հիմնական նպատակն է խաղ-մրցույթների միջոցով ստեղծել կրթվելու և սովորելու ուրույն և հետաքրքիր հարթակ, որտեղ կհավաքվեն նույն նախասիրություններն ունեցող աշակերտները, ինչը հնարավորություն կտա հաճելի ժամանցը համադրել կրթական գործընթացի հետ:

3.Այն երեխաներին ինտելեկտուալ զարգացում ապահովելու անհրաժեշտ նախապայմաններից է:

4.Այն նաև հաճելի ժամանց է և, իհարկե, օգնում է նաև զարգացնելու ճարտարախոսությունը, ինքնավստահությունը, վերլուծական և քննադատական մտածողությունը և իհարկե, տրամաբանությունը:

«ԳԻՏԱԿՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ» ԽՄԲԱԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Ակումբի անդամների կրթության որակի բաձրացումը, քննադատական, վերլուծական մտածողության, տրամաբանության զարգացումը, բազմագիտակության և անհատականության զարգացումը, հմուտ գեղեցիկ խոսքին տիրապետելը:

«ԳԻՏԱԿՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ» ԽՄԲԱԿԻ ՆՊԱՏԱԿԸ

- «Գիտակների ակումբ» խմբակը առաջին հերթին նպաստում է սովորողի ընդհանուր կրթության մակարդակի բարձրացմանը, զարգացնում տրամաբանությունը և տալիս ճիշտ և մաքուր տեղեկություններ և փաստեր.
- Նպաստում է երեխայի կաշկանդվածության և բարդույթների վերացմանը, բառապաշարի, բանավոր խոսքի զարգացմանը. ծերլուծական և քննադատական մտածողությանը.
- Օգնում է երեխային զարգացնել սեփական մտքերն արտահայտելու կարողությունը, խոսքի տեխնիկան և շփման մշակույթը. տալիս է համարձակություն և ինքնավստահություն, ինչ որ չափով ճարտասանությանն ու հռետորական արվեստին տիրապետելու հմտություն.
- Գիտելիքը վերածվում է հմտության, ինչը նպաստում է, որ ստացված տեղեկատվությունը երկարատև պահպանվի երեխայի հիշողության մեջ, օգնի նրան կյանքի տարբեր իրադրություններում դրսևորել ճկուն գործելակերպ:

«ԳԻՏԱԿՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ» ԽՄԲԱԿԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Նախաձեռնող, շնորհալի երեխաների բացահայտումն ու զարգացումը:
- Աշակերտների համագործակցությունը:
- Գործնական հմտությունների և կարողությունների զարգացում, որոնք կարող են կիրառվել առօրյայում:
- Հաղորդակցական ընդունակությունների զարգացում:
- Ինտելեկտուալ զարգացում:
- Կրամաբանական խնդիրների և վարժանքների հմտությունների ձեռքբերում:
- Սեփական բազմագիտականության /էրուդիցիա/ բարձրացում:

«ԳԻՏԱԿՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ» ԽՄԲԱԿԻ ՍԱՄՆԱԿԻՑՆԵՐԸ

Խմբակում ընդգրկվում են հիմնական դպրոցի դասարանների աշակերտները՝ 6-ից 9-րդ դասարաններից՝ կամավորության սկզբունքով:

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Ինտելեկուալ խաղ-մրցույթների կազմակերպում և ացկացում 171 հիմնական դպրոցում.

2.Խմբակի անդամների համատեղ հանգստի, միջոցառումների կազմակերպում.

3.Գիտակների ակումբի սկզբունքներին համապատասխան կրթական և այլ միջոցառումների կազմակերպում:

«ԳԻՏԱԿՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ» ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳՐԵՐԸ

1. Խմբակի սաների համար կազմակերպել գործնական սեմինարներ՝ հմտությունները զարգացնող մեթոդներով, խաղային հանձնարարություններով, տրամաբանության զարգացման վարժանքներով:

2.Անցկացնել ուսուցողական դասեր ծրագրում ընդգրկված թեմաներով, դրանով իսկ, աշակերտներին ծանոթացնել ինտելեկտուալ ակումբների, խաղ մրցույթների նրբություններին:

3.Իրականացնել համագործակցություն մայրաքաղաքի և հանրապետության հանրակրթական դպրոցների նմանատիպ ակումբների հետ:

4.Խմբակի սաների համատեղ հանգստի շրջանակներում կազմակերպել այցելություններ թատրոններ, թանգարաններ, գրադարաններ, մշակութային հաստատություններ:

5.Խմբակի նոր մասնակիցների համար կազմակերպել խաղ-թրեյնինգներ՝ հագեցած գործնական վարժանքներով ու խաղերով:

6.Գործնական սեմինարների ժամանակ մշակել և կիրառել զանազան հանձնարարություններ, խաղեր, տրամաբանությունը զարգացնող այլ հարակից մեթոդներ: Խաղ-վարժությունների միջոցով բացահայտել սովորողների կարողությունները, հմտությունները:

«ԳԻՏԱԿՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ» ԽՄԲԱԿԸ ԿՕԳՆԻ

Ամենատարբեր ոլորտներում՝ բիզնեսում, գիտության և քաղաքականության մեջ աշխատող մարդիկ իրենց որոշումների ընդունման և հիմնավորման համար կիրառում են բազմաթիվ հմտություններ, որոնցից մեկը վերլուծական, քննադատական մտածողության կարողությունն է:

- ► տեսնել, գնահատել, ստեղծել և արժևորել գիտելիքը,
- ► վերլուծաբար մտածել,
- ► դիտել երևույթները տարբեր տեսանկյուններից,
- ► տրամաբանորեն և գեղեցիկ կառուցել սեփական մտքերը,
- ► զարգացնել հաղորդակցական ընդունակությունները,
- ► բարձրացնել մասնագիտական մրցունակությունը,
- ► կյանքում հաջողակ լինել:

- Խմբակը կօգնի մարդկանց վրա դրական ազդեցություն գործել. կսովորեցնի ձևակերպել վստահությամբ և ճիշտ հնչերանգով գեղեցիկ խոսք՝ դիմացինի մոտ առաջացնելով համակրանք: Հնարավոր է, որ լավ գաղափարներ և մտքեր ունենաք, սակայն այս հմտությունների բացակայության դեպքում պարզապես չի հաջողվի դրանք գեղեցիկ, ճիշտ և համոզիչ արտահայտել:

- Խմբակում ընդգրկվելու մեկ ուրիշ առավելությունն այն է, որ երեխան դառնում է մեկ ընդհանուր նպատակի շուրջ համախմբված խմբի /թիմի/ անդամ՝ ակամայից զարգացնելով թիմային ոգին և նպաստելով խմբի /թիմի/ հաղթանակին:

«ԳԻՏԱԿՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ» ԽՄԲԱԿԻ ԱԿՆԿԱԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔԸ

- Անձի ձևավորման համար, հիմնական կրթությանը զուգահեռ, անգնահատելի են նաև հմտություններն ու ոչ ֆորմալ կրթությամբ ստացած կարևորագույն գիտելիքները: Այս առումով, հրաշալի միջոց են հանդիսանում նաև ինտելեկտուալ խաղերը, որոնք նախատեսում ենք կազմակերպել Գիտակների ակումբում:
- Բնութագրելով «Գիտակների ակումբ» խմբակի համար ներկայացված ուսումնական թեմատիկ պլանը՝ նշենք, որ տեսական մասը ապահովում է բոլոր այն առաջնային և հիմնական գիտելիքները, որոնք անհրաժեշտ են այս խմբակ հաճախող յուրաքանչյուր սանի համար:

- Գործնական բաժինը, որը հիմնականում կառուցված է վարժանքներից և խաղերից, սովորողներին հնարավորություն կտա ավելի հեշտությամբ յուրացնել և տիրապետել ինտելեկտուալ զարգատման գաղտնիքները:
- Համոզված ենք, որ այս ակումբը կխթանի բարեկիրթ հասարակության ձևավորման գործին:
- Կնպաստի աշակերտների ուսման որակի, ընդհանուր կրթական մակարդակի բարձրացմանը, ի հայտ կբերի ինտելեկտուալ պոտենցիալ ունեցող, շնորհալի և տաղանդավոր երեխաներին, կստեղծեն հարթակ նմանապիպ հետաքրքրություններ ունեցող երեխաների շփվելու, իրար ճանաչելու և համատեղ նոր ծրագրեր մշակելու համար,
- Կակտիվացնի դպրացի մշակութային կյանքը, մեր երեխաների մշակութային առօրյան, մասնակից երեխաների մոտ կձևավորեն գեղագիտական ճաշակ, կխթանեն ստեղծարարության զարգացմանը, գեղարվեստական և մշակութային կրթություն ստանալուն…

«ԳԻՏԱԿՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ» ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

«Գիտակների ակումբ» խմբակի ծրագիրն ու բովանդակությունը ներառում է բազմաթիվ տեսական թեմաներ, որոնք արտացոլված են տարեկան թեմատիկ պլանում:

Խմբակում պարապմունքները լիարժեք իրականացնելու համար դասացուցակով նախատեսված է շաբաթական 2 ժամ:

- 18 ժամ՝ «Տրամաբանության զարգացման վարժություններ».
- 18 ժամ՝ «Տրամաբանական խնդիրներ».
- 36 ժամ տեսական թեմաների ուսումնասիրում

ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆ

/34 շաբաթ, շաբաթական 2 ժամ/

1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

Հ/Հ	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ
1.	Տրամաբանության զարգացման վարժություններ	2 ժամ	սեպտեմբեր
2.	Տեսական – Ազգություններ	1 ժամ	
3.	Տրամաբանական խնդիրներ	2 ժամ	
4.	Տեսական – Ազգային սովորություններ	1 ժամ	
5.	Տեսական – Հայը և հայկականը	1 ժամ	
6.	Տեսական – Հայաստանի մայրաքաղաքները	1 ժամ	

1.	Տրամաբանության զարգացման վարժություններ	2 ժամ	հոկտեմբեր
2.	Տեսական – Երևանի աշտարակը	1 ժամ	
3.	Տեսական –Երևանի հին թաղերը	1 ժամ	
4.	Տեսական –Երևանը 1-ին Հանրապետության մայրաքաղաք	1 ժամ	
5.	Տրամաբանական խնդիրներ	2 ժամ	
6.	Տեսական – Խորհրդային Երևան	1 ժամ	

1.	Տեսական –Գինեսի ռեկորդների գիրքը	1 ժամ	նոյեմբեր
2.	Տրամաբանության զարգացման վարժություններ	2 ժամ	
3.	Տեսական –Ամենամեծ, ամենաբարձր…	1 ժամ	
4.	Տրամաբանական խնդիրներ	2 ժամ	
5.	Տեսական –Ամենախոր, ամենախոշոր…	1 ժամ	
6.	Տեսական –Ամենաերկար, ամենակարճ…	1 ժամ	
1.	Տեսական – Հետաքրքիր փաստեր հայ գրականությունից, արվեստից	1 ժամ	դեկտեմբեր
2.	Տրամաբանության զարգացման վարժություններ	2 ժամ	
3.	Տեսական – Հետաքրքիր փաստեր աշխարհագրությունից, կենսաբանությունից	1 ժամ	
4.	Տրամաբանական խնդիրներ	2 ժամ	
5.	Տեսական – Հետաքրքիր փաստեր տ/տ ոլորտից	1 ժամ	դեկտեմբեր
6.	Տեսական – Հետաքրքիր փաստեր պատմությունից	1 ժամ	

2-ՐԴ ԿԻՍԱՄՅԱԿ

Հ/Հ	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԺԱՄ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ
1.	Ամանորը աշխարհի տարբեր երկրներում	1 ժամ	հունվար
2.	Տեսական–Հայկական Ամանոր Կաղանդ	1 ժամ	
3.	Տրամաբանության զարգացման վարժություններ	2 ժամ	
4.	Տեսական – Ազգ. տոներ, ծեսեր	1 ժամ	
5.	Տեսական – Արքայատոհմեր	1 ժամ	
6.	Տրամաբանական խնդիրներ	2 ժամ	

1.	Տեսական – «Ոսկե օրենք»	1 ժամ	փետրվար
2.	Տեսական – Եկեղեցական տոներ - «Տեառն ընդառաջ», «Սուրբ Սարգիս», «Բարեկենդան»	1 ժամ	
3.	Տրամաբանության զարգացման վարժություններ	2 ժամ	
4.	Տեսական–Էջմիածնի եկեղեցիները	1 ժամ	
5.	Տրամաբանական խնդիրներ	2 ժամ	
6.	Տեսական – Տաթևի, Հաղպատի, Հառիճի վանական համալիրներ	1 ժամ	

1.	Տեսական – Հայ գուսանական, աշուղական արվեստ - Սայաթ-Նովա,Ջիվանի,Հավասի	1 ժամ	մարտ
2.	Տրամաբանության զարգացման վարժություններ	2 ժամ	
3.	Տեսական – Հայ օպերային արվեստ	1 ժամ	
4.	Տեսական –Հայ կինո և թատրոն	1 ժամ	
5.	Տրամաբանական խնդիրներ	2 ժամ	
6.	Տեսական – Հրաչյա Ներսիսյան, Վահրամ Փափազյան, Միհեր Մկրտչյան, Խորեն Աբրահամյան, Սոս Սարգսյան	1 ժամ	

1.	Տեսական–Հայկական ավանդապատում	1 ժամ	ապրիլ
2.	Տրամաբանության զարգացման վարժություններ	2 ժամ	
3.	Տեսական – Ազատագրական պայքար, Ֆիդայական շարժում	1 ժամ	
4.	Տեսական – Հայոց ցեղասպանություն, Հայ վրիժառուներ	1 ժամ	
5.	Տրամաբանական խնդիրներ	2 ժամ	
6.	Տեսական – Արցախյան ազատամարտ, Մեր օրերի հերոսները	1 ժամ	

1.	Տեսական – Հայրենական Մեծ Պատերազմ	1 ժամ	մայիս
2.	Տրամաբանության զարգացման վարժություններ	2 ժամ	
3.	Տեսական – Շուշի	1 ժամ	
4.	Տրամաբանական խնդիրներ	2 ժամ	
5.	Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատամարտեր /1-ին/	1 ժամ	
6.	Տեսական – 1-ին հանրապետություն	1 ժամ	